

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՈՒ
ՆՄԲԱԳՐԱԾ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Գանձարան-ժողովածուները միջնադարյան բանաստեղծության հարուստ, ինքնատիպ հուշարձաններից են, որոնցից պահպանվել են հարյուրավոր օրինակներ: Դրանք ընդօրինակված են տարբեր դարաշրջաններում և պատկանում են տարբեր խմբագրությունների: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, այդ ժողովածուների սկզբնավորման պատմության մեջ հատուկ դեր են խաղացել անհատական ժողովածուները: Հարցի նման ճշգրտումը ոչ միայն օգնում է հասկանալու Գանձարան-ժողովածուների ձևավորման և զարգացման ընթացքը, այլև բացահայտում ու ամբողջացնում առանձին հեղինակների ստեղծագործական ժառանգության պատկերը: Նկատենք, որ գանձագիր հեղինակների մեծ մասը միջնադարյան ճանաչված բանաստեղծներ և մատենագիրներ են: Հիշենք, օրինակ, Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Մխիթար Այրիվանեցուն և Գրիգոր Խլաթեցուն: Ինչպես ենթադրվում է, անհատական Գանձարան-ժողովածու կազմող առաջին հեղինակը Գրիգոր Նարեկացին է, որի գանձերից շատերը հասել են մեզ: Չի պահպանվել, սակայն, նրա Գանձարանը: 1286 թ. ստեղծված անհատական Գանձարան է ունեցել նաև Մխիթար Այրիվանեցին: Չնայած մինչև Մխիթար Այրիվանեցին X—XIII դարերում ստեղծվել են առանձին Գանձարան-ժողովածուներ, բայց դրանք կամ չեն պահպանվել և կամ, եթե անգամ պահպանվել են, ապա չեն ընկել հետագայում զարգացող Գանձարանների հիմքում: Մեզ հայտնի չէ նման փաստ: Ծարձ ծանոթ միակ Գանձարանը, որի մասին կարող ենք որոշակի պատկերացում ունենալ, Մխիթար Այրիվանեցու կազմածն է: Այդ ժողովածուն էլ առանձին մեզ չի հասել, սակայն նրա նյութերը համարյա ամբողջական ընդօրինակությամբ պահպանված են: Դրանց քննության միջոցով հնարավոր դարձավ վերականգնել Մխիթար Այրիվանեցու 1286 թ. Գանձարանի պատկերը՝ հեղինակային հիշատակարանով հանդերձ: Հայտնի դարձավ նաև, որ Այրիվանեցու Գանձարանի նյութերը ամբողջությամբ կան միայն XIV—XV դդ. բանաստեղծ, մատենագիր Գրիգոր Խլաթեցու կազմած համահավաք Գանձարաններում, որով, ինչպես հայտնի է, սահմանազատվում են Գանձարանների զարգացման հին և նոր շրջանները, խորանալով այս հարցում, տեսնում ենք, որ Մխիթար Այրիվանեցու Գանձարանն է հանդիսացել այն նախնական հիմքը, որի վրա Գրիգոր Խլաթեցին ստեղծել է նոր խմբագրություններ, իսկ նրան էլ հետևել են հաջորդ դարերի Գանձարաններ խմբագրողները:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են Գրիգոր Խլաթեցու խմբագրած շորս ինքնագիր Գանձարաններ (ՁՁ 8366, 6529, 4011, 5328), որոնց քննությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն վերականգնելու Մխիթար Այրիվանեցու Գանձարանը և վեր հանելու նրա դերն ու նշանակությունը՝ Գրիգոր Խլաթեցու խմբագրություններում, այլև ճշտելու, ամբողջացնելու Մխիթար Այրիվանեցու գանձերի բնագրերն ու նրանց միավորների քանակը: Այս վերջին հարցերին է, որ պիտի անդադառանք սույն հոդվածով:

Հարցի պատմության սկիզբը բացում է ՁՁ 6529, 4011 Գանձարաններում գտնվող Գրիգոր Խլաթեցու մի հիշատակարան, որտեղ նա հայտնում է, թե ինքը այդ հիշատակարանը գրելուց 26 տարի առաջ ծանոթ է եղել Մխիթար Այրիվանեցու որոշ գանձերին և շարունակ երազել է լինել մեծ գանձագրի ապրած վայրերում: Ի վերջո նրա իղձը կատարվել է: Լինելով Այրիվանեցու, նա տեսել և ընդօրինակել է Մխիթար Այրիվանեցու գանձերը՝ գրված այդ այցելությունից 100 տարի առաջ³:

Պետք է նկատել, սակայն, որ Գրիգոր Խլաթեցու՝ Այրիվանեցու կատարած ընդօրինակությունն էլ մեզ չի հասել, Ինչպես ցույց է տալիս վերահիշյալ 4 Գանձարանների քննությունը,

դրանք ներկայացնում են Գրիգոր Խլաթեցու գանձարանային աշխատանքների երկու տարբեր շրջանները՝ մինչև 1387 թ., այսինքն՝ Այրիվանք կատարած ուղևորությունը (№ 8366) և դրանից հետո (№ 6529, 4011, 5328)։ Առաջին շրջանի արգասիքը՝ № 8366 ձեռագիրն է, գրված Յիպանյաներում՝ Գրիգոր Խլաթեցու կողմից։ Զեռագիրն ունի գլխավոր հիշատակարան, որը, սակայն, թեր է։ Պահպանվել են ձեռագրի գրչի անվան երկու տառերն ու գրությունը թվականի առաջին տառը։ Այն ներկայացնում է հետևյալ պատկերը. «Գրեցա... Աստվածատուր քահանայի, ձեռամբ Գր[իգոր] պիտակ անուն բանի խըն[դրողի] վանս Յիպանյ, ընդ հովան[եաւ ամե]նազօր Սուրբ Նշանի, ի Պ... Բըւականութեանս Հայր[ի]...»⁴։ Այստեղից երևում է, որ ձեռագրի ընդօրինակությունը կատարված է 1351 («Պ») թվականից հետո, բայց որոշակի երբ՝ հայտնի չէ։

Ձեռագիրն ունի խճողուն տեսք, բովանդակում է տարբեր հեղինակների պատկանող 50 գանձեր։ Դրանցից անճանաչիտրեն աղավաղված և խեղաթյուրված են հատկապես Մխիթար Այրիվանեցու գանձերը, որոնց թիվը հավասար է 13-ի։ Ինչպես հայտնի դարձավ Մխիթար Այրիվանեցու գանձերի վերականգնված բնագրերից, նրանք բոլորն էլ անխտիր կազմված են 10-ական տներից՝ ըստ որի և՛ ծայրակապային 10-ական տառերից։ Համեմատելով դրանք № 8366 ձեռագրում ընդօրինակվածների հետ, տեսնում ենք, որ այստեղ (№ 8366) յուրաքանչյուր գանձից պակասում է առվազն 5—6 տուն։ Հանգամանալից քննությունը ցույց է տալիս, որ այդ պակասավորությունն արդյունք է ոչ թե մտածված կրճատումների, այլ աղավաղված նախահիմքի։ Միայն են կատարված նաև գանձերի մեծ մասի տնատումները, որով և ավելի անհասկանալի են դարձել ծայրակապերի արտահայտած իմաստները։

Այդ աղավաղումների մասին մոտավոր պատկերացում տալու նպատակով այստեղ առանձին աղյուսակով տալիս ենք Մխիթար Այրիվանեցու վերոհիշյալ 13 գանձերի ճշգրտված սկզբնատողերը՝ իրենց ծայրակապերով, ապա համապատասխան (աղավաղված) ծայրակապերը № 8366 ձեռագրից։ Նկատենք, որ ծայրակապերի զուգորդումից ավելի ցայտուն է երևում աղավաղումների ընդհանուր պատկերը։

№/Պ	Ըստ Մխիթար Այրիվանեցու		Ըստ Գր. Խլաթեցու (ձեռ. № 8366)
	Սկզբնատողեր	ծայրակապեր	ծայրակապեր, թերթեր
1	Բարձրեալ ահաւոր...	Բայիւ երգել	Յիւ եհ (21ա—23բ)
3	Համագոյական...	Հինգոտասան	Նգէտաս (24բ—29ա)
3	Բարձրեալ անքննին...	Բան բարոզից	Քարոբի (51ա—54բ)
4	Աստուած կենդանի...	Այրիվանեցի	Իվանսի (56ա—59բ)
5	Որգա յաւերժական...	Նրեանեցի	Աննիսպիա (61բ—64բ)
6	Վայել է քոյին...	Վեշտասանք է	Շատար (67ա—68բ)
7	Համագոյական հօր...	Հայց է սիրով	Իերմով (89ա—91բ)
8	Ջահեղ զանքննին...	Զպակասորդք	Անտարք (108ա—110բ)
9	Տէր տէրունական...	Տերունական	Յնասե (115ա—117բ)
10	Տաճարդ երկնային...	Տանից առել	Տտաւցի (138ա—140բ)
11	Խորհուրդ անքննին...	Խորհրդոցն	Հհրդոդ (141բ—145ա)
12	Ի սկզբան էիդ...	Ի փառս տեռան	Ակոասա (156ա—158բ)
13	Սուրբ երրորդութիւն...	Սարգիս գրիչ	Գիս իթչ (180ա—183ա)

Ուշագրավ է նաև հետևյալ պարագան։ Գրիգոր Խլաթեցին այդ թերի գանձերից մի քանիսի մեջ ավելացրել է սողեր և նույնիսկ ամբողջական տներ։ Օրինակ, «Սրբոց թարգմանալացն Սահակայ և Մեսրոպայ» գանձի վերջից նա բավարարվել է ընդամենը մի քանի սող լրացնելով (դրա համար օգտագործելով Մխիթար Այրիվանեցու գանձերից որոշ նախադասություններ), իսկ «Քուն բարեկենդանին» գանձի վերջից՝ երկու տուն (սկզբնատողերն են «Ի քառասնորդի...» և «Աստուծոյն մեր յոյս...»)⁵։

Համեմատելով № 8366 Գանձարանը Գրիգոր Խլաթեցու 1387 թ. հետո կազմած Գանձարանների հետ (№№ 6529, 4011, 5328), տեսնում ենք, որ այստեղ նշված աղավաղումներն ու միջամտությունները բացակայում են։ Ընդհատ է, այդ գանձերն էլ ունեն աղավաղումներ, սակայն դրանք սուկ վրիպակներ են և կապ չունեն № 8366 ձեռագրում առկա աղավաղումների հետ։ Կան նաև գանձերի տրոհումներ, սակայն դա էլ կատարված է հատուկ և հասկանալի սկզբունքով։

Ի տարբերություն № 8366 ձեռագրի, Խլաթեցու №№ 6529, 4011 ձեռագրերում առկա են Մխիթար Այրիվանեցու Գանձարանի հիշատակարանն ու Գրիգոր Խլաթեցու՝ Այրիվանքի այցելությունից ստացված տեղեկությունների հիման վրա գրված հիշատակարանները։

Ահա այս և այլ փաստեր հավաստում են, որ № 8366 ձեռագիրը Գրիգոր Խլաթեցին ընդօրինակել է ավելի վաղ, քան 1387 թ., երբ դեռ նա չէր օգտվել Մխիթար Այրիվանեցու ինքնագիր ժողովածուից: Սրանով մասամբ ճշտվում է № 8366 ձեռագրի գրչության ժամանակը. այն ցայժմ դիտվում էր որպես XV դ. գրված ժողովածու՞, իսկ այժմ կարող ենք նրա ընդօրինակության ժամանակը որոնել 1387 թ. առաջ ընկած տասնամյակներում: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Գրիգոր Խլաթեցին, համաձայն իր հիշատակարանի, 1387 թ. 26 տարի առաջ է ծանոթ եղել Մխիթար Այրիվանեցու գանձերին, «Եւ յայնմ արէ յոյժ» ցանկացել է տեսնել գանձագրի ապրած վայրերը, կարող ենք ենթադրել, որ այդ ժամանակ արդեն նրա ձեռքի տակ գտնվել է № 8366 ձեռագիրը կամ նրա նախահիմքը, որը մեզ տանում է դեպի 1360—1361 թթ.: Բայց քանի որ Գրիգոր Խլաթեցին ծնվել է 1349 թ. և չէր կարող 11—12 տարեկան հասակում արտագրել № 8366 ձեռագիրը (մանավանդ, որ այդ ձեռագրում առկա են հենց իր՝ Գրիգոր Խլաթեցու անվան հետ կապված մի շարք գանձեր), ուստի պետք է կարծել, որ նա 1387 թ. 26 տարի առաջ ծանոթ է եղել Մխիթարի գանձերին և հիշյալ գանձարանը կազմել է դրանից (1360—1361 թթ.) հետո, միայն թե մինչև 1387 թ.: Հետևապես, կարող ենք ասել, որ Մխիթար Այրիվանեցու գանձերի վիճակը խիստ անմխիթար է Գրիգոր Խլաթեցու կազմած կամ խմբագրած վաղ շրջանի Գանձարանում:

Մխիթար Այրիվանեցու Գանձարանի ավարտից մինչև Գրիգոր Խլաթեցու այցելությունը Այրիվանք անցել էր 100 տարի, մի ամբողջ ժամանակաշրջան, որի ընթացքում Գանձարանների կառուցվածքային հարցերը բավականին փոփոխվել էին՝ հասունացնելով ավելի բարդ և ճոխ համակարգի պահանջ: Այդ ժամանակ, Գրիգոր Խլաթեցին, ունենալով արդեն Մխիթար Այրիվանեցու կանոնիկ Գանձարանը, նրա գանձերի տոնական կարգի հիման վրա կազմում է նոր, եկեղեցու բոլոր տոներն ընդգրկող ժողովածուներ: Այդ նպատակով նա օգտվել է նաև ուրիշների գանձերից, տաղերից, հորդորակներից, մեղեդիներից, հաճախ էլ դրանք տրոհելով, վերափոխելով և հարստացնելով իր իսկ հորինած առանձին տներով, կաֆաներով: Դրա հետևանքով է նաև, որ նրա ձեռքի տակից անցած Գանձարաններում այլևս անհնար է գտնել Մխիթար Այրիվանեցու գանձերի ամբողջական շարքը և նրա միավորների հեղինակային հաջորդականությունը:

Այսպիսով Գրիգոր Խլաթեցին նախ ցրել է Մխիթար Այրիվանեցու Գանձարանը ըստ առանձին միավորների և վերջիններիս ներդաշնակել ուրիշների գանձերը: Այնուհետև, նա Այրիվանեցու գանձերից ստեղծել է նոր գանձեր՝ իր իսկ հավելումներով, ինչպես նաև մի շարք գանձերի մասնատումներով, որով և արհեստականորեն ավելացրել է դրանց թիվը: Այսպես, Գրիգոր Խլաթեցին վերացնելով Մխիթար Այրիվանեցու «Պետրոսի Հռովմա հայրապետին և Արիստղոմայ Սարկաւագին» գանձը (ծայրակապ «Վարդայպետի»), բաժանել է երկու մասի: Առաջին շորտներից ստեղծել է «Սրբոց առաքելոց» (հայտնի նաև «Սօթներորդ աւուրն...» խորագրով) գանձը «Վարդ» ծայրակապով, իսկ երկրորդ կեսի սկզբում ավելացնելով իր հեղինակած երեք նոր տները, կազմել է երկրորդ գանձը՝ նույն «Գանձ Պետրոսի Հռովմայ հայրապետին և Արիստղոմայ Սարկաւագին» (ծայրակապ «Վարդայպետի») խորագրով և դրանք ներկայացրել իբրև Մխիթար Այրիվանեցու տարբեր ստեղծագործություններ:

Հիշենք մի այլ օրինակ՝ Գրիգոր Խլաթեցու խմբագրությանը պատկանող Գանձարաններում հանդիպում է «Հոգոյն գալստեան» գանձը՝ «Վանիկ ասա» ծայրակապով: Գանձի հեղինակն անհայտ է, իսկ ծայրակապն էլ ոչինչ չի ասում: Հ. Տաշյանը իր ձեռագրացուցակի անվանացանկում, այս գանձի կապակցությունը, Հովհաննես Վանականի անվան դիմաց գրում է.— «Վանիկա» (Վանական), Գանձ հոգոյն գալստեան՝ 436 (ԽԶ): Հմմտ. «Վանական» եպ. Բջնոյ յամի 1358-ի՝ 260»⁷:

Ինչպես ցույց տվեց մեր քննությունը, «Հոգոյն գալստեան» գանձը ստեղծված է Մխիթար Այրիվանեցու նորահայտ «Նորակերտ գրոց արհեստից» է՝ գանձի տների վերադասավորմամբ և առաջին նախադասությունների ու բառերի փոփոխություններով: Փոփոխության հեղինակը, կարծում ենք, Գրիգոր Խլաթեցին է, որովհետև քննվող տարբերակը առաջին անգամ հանդիպում է նրա ինքնագիր Ձ 5328 Գանձարանում և այդ խմբագրությանը պատկանող ուրիշ Գանձարաններում: Հավանական է, որ նա «Նորակերտ գրոց»-ը դիտելով որպես ծիսական գանձ, դուրս է թողել իր խմբագրած Գանձարաններից և նրա փոխարեն ստեղծել նրանից ձևած «Հոգոյն գալստեան», տերունական գանձը՝ ոչինչ չհուշող «Վանիկ ասա» ծայրակապով⁸:

Մխիթար Այրիվանեցու գանձերի բնագրային փոփոխություններից բացի, ինչպես նշեցինք, Գրիգոր Խլաթեցին զբաղվել է նաև նրա գանձերի տրոհումներով: Այս եղանակով նա հնարավորություն է ունեցել բոլոր տոներն ընդգրկող իր նոր գանձարաններում լրացնել գանձերի պակասը: Հետաքրքիր է նկատել, որ շնայած գանձերը մասնատումների են ենթարկվել ոչ Մխի-

Մ ա յ Ր ա հ ա պ ե Ր		Ս կ զ Ր ն ա տ ո ղ ե Ր		Զ հ ա ղ Ր ն ի հ ա մ ա Ր ն ե Ր և է չ ե Ր ը ա տ Գ Ր Ի զ Ր ել ա թ Ե Յ Ու և մ յ Ու ն ե Ր Ի	
Ձ	Ը Ս ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	Ը Ս ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի		Ս կ զ Ր ն ա տ ո ղ ե Ր	
		Ը Ս ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	Ը Ս ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	ա) Ը Ս ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	ա, բ) Ը Ս ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի
1	Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	ա) (Տ Ե) Ր ¹⁰ Մ ի Ն Ի	ա) (Տ ա Ր Ի ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի)	ա) (Տ ա Ր Ի ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի)	№ 4011, 7ա—8ա
2	Վ ա Ր զ ա Ր յ ա Ր Ն Ի Ի	բ) Ք ա Ր ա	բ) Ք ա Ր զ ա Ր յ ա Ր Ն Ի Ի	բ) Ք ա Ր զ ա Ր յ ա Ր Ն Ի Ի	№ 4011, 10ա—11բ
3	Բ ա Յ ի և Ի Ր զ Ե Ն	ա) Վ ա Ր զ ա Ր յ ա Ր Ն Ի Ի	ա) Վ Ի Ր Ի Ր զ Ե Ն Ի Ի	ա) Վ Ի Ր Ի Ր զ Ե Ն Ի Ի	№ 424, 223բ—224ա
4	Հ ի ն գ ու ս ա ս ա ն	բ) Պ Ե Ր Ի Ն	բ) Պ Ե Ր Ի Ն	բ) Պ Ե Ր Ի Ն	№ 424, 30ա—31ա
5	Բ ա ն ք ա Ր ղ Ի Յ	ա) Բ ա Յ ի և Ի Ր զ Ե Ն	ա) Բ ա Ր ձ ա Ն ա ա Վ ա Ր Ն Ի Ի	ա) Բ ա Ր ձ ա Ն ա ա Վ ա Ր Ն Ի Ի	№ 4844, 28բ—29ա
6	Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ր Ի	բ) Ե Ր զ Ե Ն	բ) Ե Ր զ ա Ն Ի Ի Վ ա ն Ե Յ Ր Ի Ի	բ) Ե Ր զ ա Ն Ի Ի Վ ա ն Ե Յ Ր Ի Ի	№ 4844, 29բ—31ա
7	Ե Ր Ն ա ն Ե Յ Ր Ի	ա) Հ գ ա ա	ա) Հ ա մ ա ղ ա Ր յ ա Ր Ն Ի Ի	ա) Հ ա մ ա ղ ա Ր յ ա Ր Ն Ի Ի	№ 5328, 229բ—230բ
8	Հ ա յ Յ Է ս Ի Ր ՈՎ	բ) Տ ա Ր Ն ¹²	բ) Տ Ե Ր ա ն Ն ա Վ ա Ն Ի Ի	բ) Տ Ե Ր ա ն Ն ա Վ ա Ն Ի Ի	№ 5328, 90բ—91բ
9	Զ ա կ ա կ ա ո Ր ղ Ի	ա) Բ ա ն ք ա	ա) Բ ա Ր ձ ա Ն ա ա Վ ա Ր Ն Ի Ի	ա) Բ ա Ր ձ ա Ն ա ա Վ ա Ր Ն Ի Ի	№ 4844, 56բ—58ա
10	Տ Ե Ր Ն ա Վ ա ն	բ) Բ ա յ Յ	բ) Բ ա Ր ձ ա Ն Ի Ի Ի Ի Ի	բ) Բ ա Ր ձ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4844, 58ա—59բ
11	Վ կ ա յ ա կ ա ն Ե	ա) Ա յ Ր Ի Վ ա	ա) Ա ս ո Ւ Մ ա Ն Ի Վ ա ն Ե Յ Ր Ի Ի	ա) Ա ս ո Ւ Մ ա Ն Ի Վ ա ն Ե Յ Ր Ի Ի	№ 5328, 64ա—65ա
12	Տ ա Ն Ի Յ ա Ն Ի և Խ Ր Դ Ե Ր Ո Ր Պ Ե Ն	բ) Ն Ե Ր Ի ¹³	բ) Ն ա ս ո Ր Ն ա Ր Ն Ի Ի Ի Ի	բ) Ն ա ս ո Ր Ն ա Ր Ն Ի Ի Ի Ի	№ 5328, 242բ—243բ
13	Ի փ ա ս ա ս Խ ա Ն	ա) Ե Ր Ն Ի	ա) Ե Ր զ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի	ա) Ե Ր զ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի	№ 4844, 67ա—68բ
14	Վ է չ ու ս ա ս ա ն ք և Մ Ի Ր զ ա ն	ա) (Հ ա յ) Յ Է ս Ի Ր ՈՎ	ա) [Հ ա մ ա ղ ա Ր յ ա Ր Ն Ի Ի]	ա) [Հ ա մ ա ղ ա Ր յ ա Ր Ն Ի Ի]	№ 4011, 131ա—131բ
15	Մ ա Ր զ Ի և Կ Ի Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	բ) Բ Ր ՈՎ	բ) Ի տ ա Ն Ե Ր ա Ն Ի Ի Ի Ի Ի	բ) Ի տ ա Ն Ե Ր ա Ն Ի Ի Ի Ի Ի	№ 4011, 131բ—133բ
16	Ս ա Ր զ Ի և Կ Ի Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	ա) Զ ա կ ա կ ա ս	ա) Զ ա Ն Ի զ զ ա Ն Ի Ի Ի Ի Ի	ա) Զ ա Ն Ի զ զ ա Ն Ի Ի Ի Ի Ի	№ 4011, 146ա—148բ
17	Ի փ ա ս ա ս Խ ա Ն	բ) Բ Ր ՈՎ	բ) Բ Ր Ք ՈՐ Բ Ի փ ա Վ ա Ր զ Ի Ի Ի Ի	բ) Բ Ր Ք ՈՐ Բ Ի փ ա Վ ա Ր զ Ի Ի Ի Ի	№ 4011, 149բ—151բ
18	Վ է չ ու ս ա ս ա ն ք և Մ Ի Ր զ ա ն	ա) Տ Ե Ր Ն ա Վ ա ն	ա) Տ Ե Ր ա ն Ե Ր Ն ա Վ ա ն Ի Ի Ի Ի Ի	ա) Տ Ե Ր ա ն Ե Ր Ն ա Վ ա ն Ի Ի Ի Ի Ի	№ 4011, 170բ—173բ
19	Ս ա Ր զ Ի և Կ Ի Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	բ) Ա կ ա ն	բ) Ա Ր Դ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի	բ) Ա Ր Դ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4011, 174բ—176բ
20	Ս ա Ր զ Ի և Կ Ի Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	ա) Վ կ ա յ ա կ ա ն Ե	ա) Վ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի	ա) Վ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 424, 170ա—171բ
21	Ս ա Ր զ Ի և Կ Ի Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	բ) Կ ա ն Ե Յ Ր Ս ՈՒ Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	բ) Կ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	բ) Կ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 424, 171բ—172բ
		Ս (Ն Ի) Ր ¹⁷	Ս ա մ ա Ր Ի Ե Ր Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	Ս ա մ ա Ր Ի Ե Ր Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4011, 233բ—234բ
		ա) Ի փ ա յ ղ ա ¹⁸	ա) Ի ս կ զ Ի ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	ա) Ի ս կ զ Ի ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4011, 287ա—290ա
		բ) Տ Ե Ր Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	բ) Տ Ի Ն ա Ն ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	բ) Տ Ի Ն ա Ն ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4011, 290բ—292բ
		ա) Վ է չ ու ս ա ս ա ն ք և Մ Ի Ր զ ա ն	ա) Վ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	ա) Վ ա յ յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4944, 35ա—36ա
		բ) Մ ա ն ք և	բ) Մ Ո Ր յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	բ) Մ Ո Ր յ ա Ն Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4844, 36ա—37բ
		ա) Մ ա Ր զ	ա) Մ ա Ր զ Ե Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	ա) Մ ա Ր զ Ե Ր Ր Ր Ր Ր Ր Ր Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի Ի	№ 4844, 222ա—223ա
		բ) Ի ս կ ա Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	բ) Ի ս կ ա Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	բ) Ի ս կ ա Ր ա կ Ե Տ Ե Ր Մ ի Ն Ի Յ Ր Ա յ Ր Ի Վ ա ն Ե Յ Ու Գ ա ն ձ ա Ր Ն Ի Ի	№ 4844, 316ա—317ա

Քար Այրիվանեցու կողմից, սակայն դրանք կարծեք թելադրված են հենց հեղինակի կողմից: Նա նույն գանձի մեջ ընդգրկելով թեմայով միմյանց հետ առնչվող երկու տարբեր տոների նյութեր, դրանով իսկ յուրովի իրավունք է վերապահել կոտորակման: Հավանաբար այս է պատճառը, որ Գանձարաններում առհասարակ կոտորակվել են հիմնականում Մխիթար Այրիվանեցու գանձերը: Տրոհված գանձերից տերունականները երգվել են նույն տոնի տարբեր օրերին, իսկ սրբերինը և վկաներինը՝ երկու առանձին տոների ժամանակ: Օրինակ, «Ծննդան Ջրագալուցին» գանձը բաժանվելով երկու մասի՝ երգվել է ծննդյան առաջին, երկրորդ կամ հինգերորդ, վեցերորդ օրերին, իսկ «Համաւրէն Քազաւորաց» գանձը՝ նաև «Քէղորոս Քազաւորին» նվիրված տոնին:

1387 թ. հետո Գրիգոր Խլաթեցու խմբագրած առաջին Գանձարաններում (№№ 5328, 4011) տրոհվել են Մխիթար Այրիվանեցու 8 գանձերը: Սկիզբ առնելով Գրիգոր Խլաթեցուց, Այրիվանեցու գանձերի մասնատումները շարունակվել են հաջորդների կողմից. նույն օրինակով, մասերի են բաժանել ևս 7 գանձեր: Քե ինչպիսին է այս տրոհումների մոտավոր պատկերը, դա երևում է հետևյալ աղյուսակից: Մխիթար Այրիվանեցու գանձերի բնագրերի ամբողջականությունը վերականգնելու նպատակով աղյուսակում տալիս ենք ոչ միայն Գրիգոր Խլաթեցու (№№ 4011, 5228), այլև նրա հաջորդների կողմից կատարված մասնատումները (№№ 4844, 424):

Այսպիսով, Գանձարաններում Մխիթար Այրիվանեցու 21 գանձերից մասնատման են ենթարկվել 15-ը: Սրանցից սրբերին և վկաներին նվիրված որոշ գանձեր անշատվելով բուն խորագրից, ստացել են նաև նոր խորագրեր: Օրինակ՝ «Որդոց և թոռանց սրբոյն Գրիգորի հայոց հայրապետի» գանձի երկրորդ մասը ստացել է «Գանձ կաթողիկէ եկեղեցւոյ խորագիրը, «Համաւրէն կուսանաց և մարտիրոսաց»-ը «Համաւրէն կուսանաց» և «Համաւրէն մարտիրոսաց»: Այս հանգամանքը հետագայում գրիչներին և գանձերից օգտվողներին զրկել է դրանց որպես մեկ գանձի բաղկացուցիչ մասեր դիտելու հնարավորությունից: Վերջինիս նպաստել են նաև տրոհումից աղավաղված և իմաստազրկված ծայրակապերը: Տրոհման հետևանքով տուժել է հատկապես վերոհիշյալ «Սրբոյն Գրիգորի հայոց հայրապետի» գանձի ծայրակապը: Նորագույն շրջանի գանձարաններում գանձի առաջին մասը՝ «Կաթողիկէ եկեղեցւոյ խորագրով ստացել է «Տտաւեցի», «Տաւեցի», «Տաաւեց» «Տտաւցի», «Տաւեցի» ծայրակապային բառերը, իսկ երկրորդ՝ «Գանձ որդոց և թոռանց սրբոյն Գրիգորի հայոց հայրապետի» մասը «Նսիացալ», «Նիացալ», «Նիցով», «Նիցնել» ծայրակապերը²¹: Գանձի այս աղավաղված ծայրակապերը բանասիրության մեջ դիտվել են որպես Մխիթար Այրիվանեցուն տրված հատուկ անուններ: Օրինակ, Հ. Աճառյանը գրում է. «Երբև գանձասաց կրում է նաև Երևանցի, Տաւեցի, Տաւեցի, Տաւեցի անունները. կամ պարզապես Տէր Մխիթար»²²: Իրականում դրանք աղավաղումներ են: Դրա փայլուն ապացույցը գանձի անաղարտ, ամբողջական վիճակն է պահպանված հնագույն շրջանի Գանձարաններում, ուր այն ունի «Տաւեցի ասել» ծայրակապը: Ահա համապատասխան տողերը՝ հնագույն համարվող № 4068 գանձարանից.

Տաճար երկնային...
Աստանաւր յայտնեալ...
Իիւս անդր ի պղծոց...
Նոր թագ պետական...
Ի յայսմ ի ծառէս...
Յընծա զուարճական...
Այսաւր հրաշալի...
Սաինպատ լերին...
Երգեա կոյս անրթծ...
Լուսատուն բանին...

Մասնատման հետևանքով «Համաւրէն կուսանաց և մարտիրոսաց» գանձի «Ի փառս տեառն» ծայրակապը տրոհվելով մասերի, առաջին կեսում տվել է «Ի փապրս», «Ի փառասա», «Ի փառասա», «Ի փառասա», իսկ երկրորդ կեսում՝ «տեառն», «տիեահն» ձևերը: Նման աղավաղման են ենթարկվել նաև Սաղկազարդին նվիրված «Հայցէ սիրով» և այլ ծայրակապեր: Զպիտի մոռանալ նաև, որ տրոհումներից տուժած գանձերի աղավաղումներն ավելացել են նաև ընդօրինակման ժամանակ գրիչների թույլ տված սխալների պատճառով: Ամենափոքր վրիպակից անգամ աղճատվել, իմաստազրկվել են գանձերի ծայրակապերը: Նորագույն շրջանի Գանձարաններում այդպիսի վիճակում է, օրինակ, «Բուն բարեկենդանին» գանձի «Երևանեցին» ծայրակապը: Այն Գանձարաններում ունի «Երեւէլէնեցի», «Երաւեցին», «Երեւէլէնեցին», «Երեւանեցին», «Երգաւեցին» ձևերը: Հասկանալի է, որ դրանց կարգավորումով միայն կարող էր երևան գալ

Մխիթար Այրիվանեցու գանձերի նախկին, հեղինակային տոնական շարքը: Հենց այս եղանակով էր, որ հայտնաբերեցինք Մխիթար Այրիվանեցու գանձերի և նրա Գանձարան-ժողովածուի մասին որոշակի պատկերացում տվող ընդհանուր ծայրակապը, որը ցարդ վրիպել էր մասնագետների ուշադրությունից: Խոսքը Մխիթար Այրիվանեցու մի շարք գանձերի ծայրակապերի գումարով ստեղծվող ամբողջական և իմաստավոր ծայրակապային (ակրոստիֆոսային) պարբերության բացահայտման մասին է, որի միջոցով հեղինակը մեզ հաղորդում է բացառիկ կարևոր տեղեկություններ իր Գանձարանի շուրջը:

Նշված աղավաղումների կարգավորումով պարզվեց նաև, որ Գանձարաններում ցրված և հաճախ որպես առանձին միավորներ դիտվող Մխիթար Այրիվանեցու 15 գանձեր կազմված են նրա համապատասխան գանձերի տարբեր մասերից և արհեստականորեն ավելացնում են այդ գանձերի քանակը՝ 21 միավորից հասցնելով 36-ի:

Հին և նոր շրջանների Գանձարանների համեմատությունից երևան են գալիս Գրիգոր Խլաթեցու խմբագրական քնույթի այլ աշխատանքներ ևս՝ կապված գանձերի տաղաչափության, հանգավորման հարցերի հետ: Այստեղ արդեն Մխիթար Այրիվանեցու գանձերը, լինելով նախապես շափաբերված և հանգավորված, համարյա բոլորովին շին փոփոխվել: Ավելին, պետք է կարծել, որ հենց Մխիթար Այրիվանեցու գանձերի տաղաչափական հնարանքներին է հետևել Գրիգոր Խլաթեցին: Քերես հենց այդ է նկատի ունեցել Գրիգոր Խլաթեցուն գնահատող հետևյալ սողերի հեղինակը. «Առեալ զառաչնոց երգեալ Գանձարանսն և յամենեցունցն զհամեղարանսն և զբաղցեանական հաւաքեալ՝ սրբաբրեաց մեծաւ աշխատութեամբ և ի յտն եհան: Քէ պակաս բան կայր ի վանկսն՝ լաւելոյց յնեհեէ, և թէ աւելի բան կայր, որ հատակոտոր բերէր զվանկսն՝ քերեալ ի բաց եհան»²³:

Այսպիսով, Գրիգոր Խլաթեցին ձեռք բերելով Մխիթար Այրիվանեցու Գանձարանը, նրա հիմքի վրա կազմել է ժամանակի պահանջներին համեմատ, ավելի ճոխ համակարգով նոր Գանձարաններ: Իր խմբագրական աշխատանքների ընթացքում, Խլաթեցին ազատորեն միջամտել է Այրիվանեցու ստեղծագործություններին՝ կա՛մ մասնատելով վերջինիս գանձերը, կա՛մ այդ գանձերից ստեղծելով նոր տարբերակներ, այդ միջոցով լրացնելով գանձերի պակասը իր խմբագրություններում: Նրանից սկիզբ առած Մխիթար Այրիվանեցու գանձերի տրոհումները շարունակվել են հաջորդների կողմից, որի հետևանքով նորագույն շրջանի Գանձարաններում խախտվել է նրանց թիվը՝ 21-ից հասնելով 36-ի: Բացի այդ, մասնատումների հետևանքով փոխվել են գանձերի խորագրերն ու աղավաղվել հեղինակային իմաստ արտահայտող ծայրակապերը:

Կարծում ենք՝ այս էջումները կարող են օգտակար լինել մասնագետների համար:

¹ Ա. Քյոչկեյյան, Գրիգոր Նարեկացու գանձերն ու Գանձարանների սկզբնավորումը, «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 55—68:

² Տե՛ս է. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցու «Գանձարանը», «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 101—112:

³ Հիշատակարանի թերի տվյալները լրացնում են նույն Գանձարանում պահպանված Գրիգոր Խլաթեցու երկու հիշատակագրությունները, որոնցում որոշակիորեն նշվում է, որ նա Այրիվանեցու եղել է 1387 թ. և տեսել է Մխիթար Այրիվանեցու 1286 թ. կազմած Գանձարանը:

⁴ Ձեռ. № 8366, Թերթ 212բ: Տե՛ս հրատարակված՝ Լ. Խաչիկյան, ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն 2, Ե., 1967, էջ 1425:

⁵ Ձեռ. № 8366, Թերթ 64ա—բ: Այդ միջամտությունների մի մասը նա հետաքայլում օգտագործել է իր սեփական գանձերի մեջ: Այդպիսիներից է «Աւագ երկուշաբթի ի Գրիգոր վարդապետէ՛ գանձի վերամշակված օրինակը, ուր առկա է Պ 8366 ձեռագրում գտնվող Մխիթար Այրիվանեցու «Բուն բարեկենդանին» գանձի մեջ մուծված «Աստուծոյն մեր յոյս» սկզբնատողով սուներ (ձեռ. № 8366, Թերթ 64ա—բ, ձեռ. № 3540, Թերթ 143ա—146բ):

⁶ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Բ, ձեռ. № 8366:

⁷ Լ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 1129:

⁸ Գրիգոր Խլաթեցու Պ 8366 Գանձարանը սկսվում է Մխիթար Այրիվանեցու նորահայտ մի տաղով (սկզբնատող՝ «Աստուած յերկնից խոնարհեալ...»): Այն այստեղ յուրաքանչյուր երկու տողից հետո ունի կրկնակ հայատառ պարսկերեն և թուրքերեն լեզուներով: Կրկնակ բացակայում է տաղի մեզ հայտնի երկրորդ օրինակում (Մ. Քեչիկյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Ձմմառի վանքի, ձեռ. № 85, Վիեննա, 1964): Նկատի ունենալով դա, ինչպես նաև այն, որ նման

օտարալեզու տաղեր XIII դարում դեռևս չկային, ենթադրում ենք, որ կրկնակն ավելացվել է հետագայում, հավանաբար գրիչների կողմից:

⁹ Տե՛ս է. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 108—109:

¹⁰ Քանձը թերի է՝ թերթ ընկած լինելու պատճառով:

¹¹ «Ս» ծայրակապային տառը վրիպակի արդյունք է: Գրիչը «Տէրն երանելի»-ի փոխարեն ընդօրինակել է «Սուրբն երանելի»:

¹² Ծայրակապի երկու մասերը աղավաղված են սխալ տնատումից: Ձեռ Մ 4844-ում ունի «Հինգէ» (թ. 31բ—32բ) և «Տասան» (թ. 32բ—34ա) ծայրակապային բառերը:

¹³ Այս գանձը ձեռ. Մ 4844-ում տրոհված է «Այրիվ» (թ. 64ա—65ա) «Անեցի» (սկզբ. «Արմատ անիծեալ» թ. 65ա—66բ) մասերի:

¹⁴ Ձեռագրերից թերթեր ընկած լինելու պատճառով պակասում են «հայ» ծայրակապը առաջացնող տները: «Տ» ծայրակապային տառը վրիպակի հետևանք է՝ «սերդ» բառի փոխարեն ընդօրինակված է «տերդ»: Ձեռ. Մ 4844-ում գանձի երկու մասերն ունեն «Հայցեալ» (90ա—91ա) «Իրով» (91բ—92բ) ծայրակապերը:

¹⁵ Ձեռ. Մ 424-ում գանձի առաջին մասը հոդում է «Ջպակասք» բառը (114ա—115բ): Վերջին «ք» ծայրակապային տառը սխալ տնատման արդյունք է:

¹⁶ «Ո» ծայրակապային տառը, «Արեն» բառի փոխարեն սխալմամբ «Որեն» ընդօրինակելու հետևանք է:

¹⁷ Ձեռագրից պակասում է գանձի առաջին մասի «ոնի» տները և երկրորդ մասը: Ձեռ. Մ 4844-ում այն ունի «Տտաւցի» (149ա—150ա) և «Նիցանել» (160ա—161բ) ծայրակապերը՝ առաջացած սխալ տնատումից:

¹⁸ «Ռետին» բառի փոխարեն ընդօրինակված է «Պետին», որտեղից էլ առաջացել է «Պ» ծայրակապային տառը:

¹⁹ «Ջ» ծայրակապային տառը առաջացել է «Ռահք» բառի փոխարեն «Ջահք» ընդօրինակելու հետևանքով:

²⁰ «Պ» ծայրակապային տառը առաջացել է «Սաւղոս» բառի փոխարեն «Պաւղոս» ընդօրինակելու հետևանքով:

²¹ Անհարկի չէր լինի այստեղ փոքր ինչ մանրամասն ցույց տալ աղավաղումների մոտավոր պատկերը: Վերցնենք նշվածներից «Տտաւցի» ծայրակապը: Այն ստացվել է «տտ» տառերով սկսվող հատվածներից, որոնք գանձում կազմում են մեկ տուն, բայց այստեղ սխալ տնատման հետևանքով առանձնացվել են: «Ա»-ն և «աւ»-ն գանձից պահպանված ծայրակապային տառերն են: «Տ» ծայրակապային տառը ներկայացնում է գանձի «Ծրգեա՛», կոյս անբիծ» սկզբնատողով նախավերջին տունը, որը այստեղ տրոհման հետևանքով պետք է լիներ գանձի երկրորդ՝ «Որրոց և թոռանց արբոյն Գրիգորի» մասում: «Տ» ծայրակապային տառով սկսվող տունը՝ «Յուցեալ Սազաշէն» սկզբնատողով, «Քարզմանչաց» գանձի վերջին տունն է և սխալմամբ միացվել է այս գանձին: «Ե»-ով սկսվող տունը դարձյալ անհարազատ է գանձին, ուստի գանձի առաջին մասը բաղկացած պետք է լիներ միայն ծայրակապային երեք տներից՝ «Տան»:

Գանձի երկրորդ մասի «Նիացալ» ծայրակապը առաջացել է հետևյալ կերպ. ծայրակապային երրորդ տառը՝ «Ա», կազմում է երկրորդ «Ե» տան մի մասը, այսինքն՝ կատարվել է սխալ տնատում: Նման սխալի հետևանք է և ծայրակապային «Ս» տառը, որով սկսվող տունը մասն է «Ե» սկզբնատառով սկսվող տան: «Ա» և «Ե» գանձի երկու տներն են, որոնց միջից պակասում են «Ս» և «Ե», այն է՝ «Սաինպատ լերին» և «Երգեա կոյս անբիծ» սկզբնատողով տները, որոնցից վերջինը, ինչպես նշեցինք, միացած է գանձի առաջին մասին:

Ահա այս տիպի աղավաղումներ են նաև գանձի ծայրակապերի մնացած ձևերը: Բնականորեն, նշված աղավաղումներով գանձի առանձին մասերը հեռացել են միմյանցից և դիտվել որպես ինքնուրույն միավորներ: Այլ է պատկերը այն Գանձարաններում, ուր ծայրակապերից թեկուզ մեկը պահպանել է իր նախկին ուղիղ ձևը: Նման պատկեր ունի Մատենադարանի Մ 5521 Գանձարանը: Այստեղ ևս գանձը տրոհված է մասերի, սակայն երկրորդ մասը ունի «Նից ասել» ճիշտ ծայրակապը: Դա արդեն հիմք է տվել գրչին, գանձի երկու մասերը դիտելու որպես մեկ ամբողջություն: Այդ կապակցությամբ նա գրում է «Այս գանձի առաջս «Տաճար երկնային» է. «Տաւնից ասել» կու կապէ: Տուն գիրն և Այրն և Իւնն: Ցեկեցեղոյ գանձն է գրած» (թ. 261բ): Ապա հաջորդ էջում փորձում է հիմնավորել իր ենթադրությունը գանձի բովանդակությամբ: «Եւ զ(ուսատու)րիչն և զորդիսն և զթոռանսն ի զարդ հարսին եկեղեցոյս է համարէր էրեւնցին» (թ. 262ա):

²² Հ. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, Ե., 1946, հտ. 3, էջ 376:

²³ Լ. Խաչիկյան, Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե., 1955, հտ. 1, էջ 583:

Э. О. АРУТЮНЯН — Гандзы Мхитара Айриванеци в сборниках «Гандзаранах», отредактированных Григором Хлатеци.— Сборники типа «Гандзаран» являются богатыми самобытными памятниками средневековой поэзии, в истории формирования которых особую роль сыграли сборники, созданные отдельными авторами. Одним из первых таких авторов был Мхитар Айриванеци, чей «Гандзаран», написанный в 1286 г. до нас не дошел. Однако сохранились материалы его сборника, разбросанные в «Гандзаранах» старой и новой редакций. Как показывают исследования, «Гандзаран» Мхитара Айриванеци полностью сохранился лишь в сборниках писателя-поэта XIV—XV вв. Григора Хлатеци. Этими сборниками разделяются старый и новый периоды в развитии «Гандзаранов».

Автору статьи удалось выяснить, что Григор Хлатеци, составив на основе «Гандзаран»-а Мхитара Айриванеци новые, сравнительно более систематизированные сборники, согласно с требованиями того времени. В процессе редакторской работы Григор Хлатеци довольно свободно обращался с произведением Айриванеци, разъединял гандзы последнего, создавал новые варианты, восполняя тем самым в своих редакциях недостающие гандзы. Начавшееся с этого времени дробление гандзов Мхитара Айриванеци продолжалось и последующими авторами, в результате чего в «Гандзаранах» позднего времени нарушилось их количество (от 21 до 36). Кроме этого, в результате дробления гандзов изменились их наименования и исказились акростиhi, выражающие авторскую идею.

В статье сделаны необходимые уточнения, на их основе составлены таблицы, которые могут представить интерес для специалистов.